



Ն Ա Խ Ա Ռ Ա Ն

«Հայ ժողովրդական հեփաթների» գիտական հրատարակության ներկա 13-րդ հատորն ընդգրկում է պատմական Հայաստանի Տուրքերան (Մուշ-Տարոն) ազգագրական շրջանի հեփաթները: Հառարում մասնավորապես տեղ են գտել Մուշ ֆաղափի (իր շորս թաղերով), Զիարեթ, Արսունֆ, Սալբկան և Վարդենիս գյուղերի նյութերը: Մուշ-Տարոն աշխարհը հսկայական դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության ողջ ընթացքում և անցնջելի հետք բոլոր ժողովրդի հիշողության և երեակայության մեջ*:

Հառարի բանահյուսական նյութերը, բացառությամբ երեփի՝ № 5, 7, 16, ապագրվում են առաջին անգամ: Նրանց մասին անհրաժեշտ տեղեկությունները արված են «Մանոթագրություններ» բաժնում: Հառարում ընդգրկված հեփաթները գրի են առնված 1915—16 թթ. ընթացքում ներկայիս Սովետական Հայաստանում և Անդրկովկասի հայաբնակ վայրերում ապաստան գտած Մշո դաշտի նախկին բնակիչներից՝ Ե. Լաֆայանի կազմակերպած բանահյուսական խմբաբաժնի կողմից:

Խմբաբաժնի կազմում գործել են ինքը՝ Ե. Լաֆայանը, Նազարեթ Մարտիրոսյանը, Սենեֆերիմ Շալոյանը, Նրվանդ Պեղազյանը, Արաաշես Բարսեղյանը, Մարտիրոս Տապաղյանը: Գրառումների սկզբնօրինակ-ձեռագրերը պահանվում են Հայկ. ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հետ-

* Հայ ժողովրդական հեփաթների հառարդ՝ XII հատորը հուլիսին նվիրված է Մուշ-Տարոնին. այդ հատորի առաջարանում արված են անհրաժեշտ պատմա-աշխարհագրական տեղեկություններ:

գիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվում (Ե. Լալայանի ֆոնդ):

Ներկա հատորում պահպանված են նախորդ հատորների համար մշակված տեխտաբանական, ինչպես նաև հեփիաթների սյուժեների դասակարգման և տեղաբաշխման սկզբունքները:

Տողատակին հանդիպող ՄԱ, ՄԲ, ՄԿ, ԹԿ համառոտագրությունները նշանակում են՝ ծանոթագրություն ասացողի, ծանոթագրություն բանահավաքի, ծանոթագրություն կազմողի, թարգմանություն կազմողի:

Հատորը բաղկացած է երկու հիմնական բաժիններից:

1. Բնագրեր, որոնք ներկայացված են հերթական միասնական համարակալմամբ:

2. Ծանոթագրություններ, ուր նույն հերթականությամբ տրված են յուրաքանչյուր հեփիաթի մասին եղած տեղեկությունները, գրառման վայրն ու ժամանակը, ասացողների մասին պահպանված կենսագրական տվյալները, երբ և որտեղ է գրի առնված, եթե տպագրված է՝ որտեղ է հրատարակված, եթե ձեռագիր է՝ որտեղ է պահվում: Բառարանում բացատրված են բարբառային դժվար հասկանալի և փոխառյալ բառերը: Ցանկեերում հեփիաթները դասավորված են ըստ տեղի և ասացողների, այբբենական կարգով: